



ԿԱՐԵՎՈՐ ՄԻ ՆԱՄԱԿ¹⁾



ին և նորնամակների շատ և նք հանդիպում պատահական առիթներով, բայց շատ հաճախ աննկատ ենք թողնում ու անցնում: Սակայն կարևոր իրարարձութիւններ առիթ են տալիս, որպէսզի առունձին ուշադրութիւն նվիրենք այս կամ այն փաստաթղթին: Այդպիսիներից մեկն է այն նամակը, որ հրատարակում ենք ստորև:

1945 թ. հունիսին, օգնովելով այն առիթից, որ Ռումինիայի մայրաքաղաք Բուխարեստումն էի գտնվում, հետազոտական աշխատանքներ էի կատարում քաղաքի «Ռումինահայ Կենտրոնական մատենադարան»ի դիվանում, այդ քաղաքի դարավոր անցյալին վերաբերող նյութեր հավաքելու նպատակով:

Այդ օրերում հեռագրերն հաղորդեցին, որ էջմիածնում գումարված Ազգային-Եկեղեցական ժողովի կողմից Ամենայն Հայոց Կաթողիկոս է ընտրվել Գեորգ Արքեպիսկոպոս Չորեքյանը: Լուրը արագորեն տարածվեց: Այդ առիթով, մի աննախընթաց եռուզեռ և աննկարագրելի ոգևորութիւն սկսվեց հայոց եկեղեցում և նրան հարակից ազգային հաստատութիւններում (Մատենադարան, Դպրոց, «Հայաստանյան ծակատ»ի ակումբ): Այդ եռուզեռի ընթացքին, ես շարունակում էի իմ աշխատանքները դիվանում և ահա՛ ի՛նչ զուգահիւսութիւն. ձեռքս ընկավ նորընտիր Հայրապետի անձնավորութիւն վերաբերող հիսնամյա հնութիւն ունեցող մի նամակ, որ ես

արտագրեցի և, նկատի առնելով նրա ներկայացրած կարևորութիւնը, այսօր հանձնում եմ հրատարակութեան:

Նամակը պատմական արժեք է ներկայացնում այն տեսակետից, որնա վերաբերում է Հայկական Եկեղեցու այսօրվա փրագույն Պետի երիտասարդութեանը և տեղեկութիւններ է տալիս նրա մեծ արժանիքների մասին: Բովանդակութիւնը Սուլալայի հայերի հոգեվոր հովութեան համար մի հարմար, պատրաստված թեկնածու գտնելու խնդրն է: Պատասխանելով Սուլալայի հայոց Ազգային հոգաբարձութեան նախագահի 11 մայիսի 1894 թվակիր մի նսկամին, մեր նամակագիրը, որ Հուսիկ վարդապետն է (Զոհրաբյան), տվյալ խնդրով իր կատարած բանակցութիւնների մասին տեղեկութիւններ է հաղորդում: Ըստ որում, պարզվում է, որ նրա կողմից այդ ուղղութեամբ առաջարկ է եղել նախ Ստեփան Կանայանցին, որից սակայն որևէ պատասխան չստանալով մինչև այդ, նա կանգ է առնում 26-ամյա երիտասարդ Գեորգ Մարկավազ Չորեքյանի վրա, երկարորեն գովաբանում նրա բարեմասնութիւնները, վկայում նրա մեծ արժանիքների մասին:

Այս նամակը մենք այսօր հրատարակութեան հենք տալիս որպէս ապացույց այն բանի, որ Հայաստանյայց Եկեղեցու այժմյան գերագույն Պետի— այդ անբասիր եկեղեցականի— անձնական արժանիքները շատ վաղուց են զնահատված եղել, դեռևս երիտասարդութեան շրջանից. ուրեմն և ո՛րքան բարեպատեհ դեպք է եղել նրա ընտրութիւնը 1945 թ. հունիսին Ազգային-Եկեղեցական համագումարի կողմից և բարձրացումը Ամենայն Հայոց հայրապետական աթոռի վրա:

Նամակի բնագիրը, ուրիշ արխիվային նյութերի հետ, դեռևս պատերազմից առաջ է տարված եղել «Ռումինահայ Կենտրոնական Մատենադարան»ը, որտեղ կենտրոնացված են նաև Ռումինիայի այլ կողմերից բերված ուրիշ շատ փաստաթղթեր:

1) Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Զ. ի ծննդյան 80-ամյակի և եկեղեցական, ուսուցչական և հասարակական գործունեութեան 60-ամյակի կարգակցութեամբ, «էջմիածին» ամսագրի խմբագրութիւնը պարբերաբար հրատարակելու է մեծ և անբասիր հովվապետի բեղմնավոր գործունեութիւնը արտացոլող որոշ վավերագրեր: Նշված նամակը այդ շարքի նյութերից է:

Խմբագրութիւն

Ահա նամակը.

Մեծապատիւ Պարոն Վարդերես Կարապետի Ասպետ-Բրունգովեան, բարեջան նախագահ Ազգային Հոգաբարձութեան Հայոց Սուշավայի.

Ընկալալ զթուղթ, զոր ի 11 ամսոյս թ. 53 գրեալ էիք, յուշ առնելով ինձ զխոստումն իմ, զոր տուեալ էի ի Բելց, վասն ցուցանելոյ զքահանայ ոք կամ վարդապետ գերմանագէտ, հմուտ եկեղեցական կարգաց և բարեբարոյ:

Ունենալով ի նկատի զկարեւորութիւնն խընդրոյն, փութամ աստի՛ ի նախիջեան քաղաքէ վիճակին Բեսարաբիոյ գրել պատասխանի, չեւ եւս դարձ արարեալ ի քնակավայրն իմ ի Բիշնեւ, և ոչ անագան երանելոց եմ:

Յետ տեսակցութեան իմոյ ի Բելց ընդ Ձեզ, Գերամեծար Պարոն, ի ժամանելն իմ ի Քիշնեւ զցանկութիւն Հայոց Սուշավայի ոմնել զոք բարեկիրթ ի հովիւ, նամակաւ յայտնեցի բարեկամին իմում Պ. Ստեփանոսի Կանայեան, որ յետ աւարտելոյ զընթացս ուսման ի Հոգեւոր Ճեմարանի Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, զամս ինն տեալ է յԵւրոպա, յատկապէս ի Գերմանիա եւ այժմ է, ուսուցիչ ի Հոգեւոր Սեմինարիային Շուշոյ: Խնդրեցի զնա, եթէ հաճիցի՛ ընկալցի զկոչումն քահանայի կամ վարդապետի ի վերայ հայազգի ժողովրդոց մերոց ի Սուշավայի, կամ ցուցցէ զայլ ոք արժանաւոր. ցայտօր չընկալալ պատասխանի:

Բարեբախտաբար աստ, ի նախիջեան քաղաքի, հանդիպեցայ Սարկաազի ուսեմն ի միաբանից Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի Զօրէքեան Գէորգ անուն: Սարկաազդ այդ հնգօք ամօք յառաջ աւարտեալ զընթացս ուսման ի Ճեմարանի Մայր Աթոռոյ ըստ

տնօրէնութեան Վեհափառ Հայրապետին Հայոց Տեառն Մակարայ Ա. կաթողիկոսի, առաքեցաւ ի Գերմանիա, յուսանել անդ զԵւրոպական երաժշտութիւն: Եկաց նա ի Լայպցիգ զամս շորս եւ ամիսս վեց եւ յայսմ ամի դարձարար ի Ս. Էջմիածին, իսկ այժմ գտանի ի հայրենիս իւր, ի տես ծնողաց եկեալ:

Գիտելով զի Սարկաազն քաջ հմուտ է եկեղեցական երգեցողութեան մերում, գիտէ եւ զԵւրոպական երաժշտութիւն ուսեալ ի Լայպցիգ, խօսի գերմաներէն, կոչեցի զնա առ իս եւ յայտնեցի զցանկութիւն ժողովրդեան տեղւոյդ. նա յօժարեցաւ. եթէ լիցի համաձայնութիւն երկուտեք, մնայ նմա ձեռնարիլ վարդապետ եւ զալ այդր:

Վասն սարկաազիդ յիկայեմ զի է նա հմուտ հայերէն լեզուի, եկեղեցական կարգաց, եւ եւ հայկական եւ Եւրոպական երաժշտութեանց. ի բերանոյ նորա վկայեմ զի նա, ի լինելն ի Լայպցիգ, լուեալ է դասախօսութիւն յաստուածաբանական ֆակուլտետի Համալսարանին: Այրն երկի հանրարտաբարոյ եւ ամաց իբրեւ 26-ից:

Եթէ հաճիցի՛ Հոգաբարձութիւնդ, կարդ մտանել ընդ սարկաազին ի բանակցութիւն ըստ հասցէիս.

В Нахичевань на Дону
Его Преподобию Архидиакону
Геворку Чорекчянцу.

Օրհնելով զՁեզ եւ զհայ հասարակութիւն տեղւոյդ, ողջունիւ յարգանաց

Մնամ
Գերագնիւ Տէր,
Վասն Ձեր աղօթարար
Յուսիկ վրդ.

29 դեկտ. 1894 ամի,
ի նախիջեան

